

Ա. Պ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Ա. Գ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ՊԱԼԱՐԱԲԱԿՏԵՐԻԱՆԵՐԻ ԷԿՈՏԻՊԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Թիֆնոնածաղկավոր բույսերի և պալարաբակտերիաների սիմբիոզի էֆեկտավորության կարեռը գործոններից մեկն էլ միջավայրի խոնավությունն է: Դեռ Сайл-ը (1893) նկատել է, որ ոլոռնի, լուսվինի և բակլազի մշակման ժամանակ հողը խոնավացնելու դեպքում պալարաբոլացումը հինգ տանգամ ավելանում է չշրջած հողերի հոմինատությամբ:

Prucha-ն (1915) ոլոռնի մշակման ժամանակ նկատել է, որ պալարիփների քանակությունն ավելանում է խոնավության բարձրացմանը համընթաց, մինչև ընդհանուր խոնավության 40%-ի ստամանում: Wilson-ը (1917), Hegke-ն (1920), Տիմուրջին (1940) դտել են պալարիփների մաքսիմալ քանակությունը լցուալինի, ոլոռնի, վիճի, սերաբեկայի մշակման ժամանակ, հողի խոնավության 75—90% -ի պայմաններում: Չուվաևան (1930) սոլյալի պալարիփների մաքսիմալ քանակությունը հաշվել է խոնավության 80% -ի դեպքում: Շվեցովան (1931) պալարիփների գոյացումը հաշվել է 30—40 և 60% /0 խոնավության պայմաններում: Կովրովյան (1931) դանում է, որ խոնավության օպտիմումը տարրեր է տարրեր տիպի հողերի համար: Ֆեռգորովս ու Պոտյապոլսկայան (1951) վեգետացիոն փորձի պայմաններում կվարցի ավազի մեջ աճեցրել են ոլոռն, փորձարկելով 25, 40, 60, 80 և 100% /0 խոնավություն, հաշված ավազի լրիվ խոնավությունից: Պարզվել է, որ թիվ՝ թիվ՝ սերմերի և թիվ՝ պալարաբոլացման տեսակետից ամենից լավ արդյունքներ են ստացվել 60—80% /0 խոնավության պայմաններում: Սերմերի ծիման էներգիան ամենից բարձր եղել է 80% /0 խոնավության պայմաններում: 100% -ի դեպքում ոչ մի ժի չի առաջացել, իսկ 25% /0 -ի դեպքում սերմերը ծիմ, տվել են թուլլ բույսեր և 2—3 շաբաթից չորացել:

Ովկախնակին (1954) ուսումնասիրել է 30—50% /0 խոնավության ազդեցությունը թիթեռնածաղկավոր բույսերի բերքի և պա-

լարիկների քանակի վրա: Պարզվել է, որ համեմատաբար քավէֆեկտ է ստացվել 50% խոնավության գեղքում, բայց այդ տրփալները վերջնական չեն կարող լինել, քանի որ հեղինակի ուսումնաժողովները սահմանալին չեն ոչ թիթեռնածաղկավոր բուլսերի և ոչ էլ պալարաբակտերիաների զարգացման համար: Ովկրախնակու աշխատության մեջ հետաքրքրական է այն փաստը, որ լրացրեցին խոնավության գեղքում (40 լ. ջուր 1 լմ), մեկ հեկտար տարածությունից առավելագույն արմատների վրայից 40 կգ պալարիկների փոխարեն հավաքվել է 200 կգ: Այդ նույն պարմաններում; Կորնգանի արմատների վրայից 240 կգ-ի փոխարեն հավաքվել է 66: Կզ պալարիկների մասսա: Ինչպես տեսնում ենք, կորնգանի արմատների վրա անհամեմատ ավելի մեծ քանակությամբ պալարիկներ են լինում, քան առավելագույն արդեմ երեսով հեղինակը բացատրում է նրանով, որ կորնգանն ավելի հարուստ է մազարմատներով, քան առավելագույն: Մեր կարծիքով, այդ բացատրությունը միակողմանի է, դրանց պետք է ավելացնել նաև մի շարք կարևոր բիոլոգիական առանձնահատկաթյուններ, որոնցով օժտված են թե կորնգանը և թե նրա պալարաբակտերիաները:

Հստ Ֆեոդորովի (1952), պալարագուացման համար ամենակարևորն այն է, որ ցանքի առաջին օրերը հողում լինի նորմալ խոնավություն, խոնավության պակասության գեղքում մազարմատները շուտով մահանում են և նոր պալարիկների գոլացումն անհրնար է դառնում, իսկ եղած պալարիկները սկսում են մահանալ: Այսպիսով, բուլսերի և պալարաբակտերիաների միջև եղած կոնտակտը խանգարվում է, որի հետևանքով և մթնոլորտի ազդությունը առաջանում է անհնար: Խուզակովի (1930) տվյալները նույն են հաստատում տնտեսական ցանքերի պայմաններում: Նա նկատել է, որ եթե անձրևները լինում են վեգետացիալի երկրորդ կեսին, իսկ առաջին կեսը լինում է չորրային, միևնույն է, թիթեռնածաղկավորների բերքն ստացվում է ցածր և նիտրագինիզացիան չի տալիս մեծ էֆեկտ, իսկ եթե հակառակն է լինում, այսինքն վեգետացիալի սկզբում խոնավությունը բարձր է լինում, երկրորդ կետում ցածր, դա առանձնապես բացասաբար չի անդրագառնում բերքի և պալարագուացման վրա:

Հողի փոփոխական խոնավությունը վեգետացիալի ընթացքում նույնպես բացասաբար է անդրագառնում թիթեռնածաղկավոր բուլսերի բերքի և պալարաբակտերիաների կենսագործունետիւան վրա: Այս դրույթը հաստատում է Տիմորզին (1940) սիսնով նկատմամբ,

իսկ Շվեյցարիան (1931) գտել է, որ խոնավության փոփոխականությունը չի ազդել սուլայի պալարարակտերիաների վրա:

Մեր բազմաթիվ դիտողությունները առվելացի, կորնդանի և այլ բազմ ամլա թիթեռնածաղկալոր խոտարուկսերի պալարագոյացման ինտենսիվության վերաբերյալ, կապված բուլսերի վեգետացիալի, ցանքի տարիների և այլ գործուների հետ, միաժամանակ մեզ բերել են այն հզրակացության, որ խոնավության տատանումները վեգետացիալի ընթացքում շատ խիստ անդրադառնում են պալարիֆիների քանակի վրա: Օրինակ՝ եզմիածնի Տեխնիկական կուլտուրաների ինստիտուտի առվելացի ցանքերի շուրջ 1952 թ. օգոստոսի երկրորդ կեսին բավական ուշացել էր, երբ ուղեցինք այդ գաշտում պալարիֆիների հաշվառում կատարել, ոչինչ չստացվեց, որովհետեւ բուլսերի մազարմատները, գորշացել, տուրդորը կորցրել և նրանց մետ մեկունդ նաև չմշկվել ու անհետացել էին պալարիֆիները: 12—15 օր անց, այդ նույն դաշտում, հողամասը զրելոց 6—7 օր հետո, պատկերը միանգամայն այլ էր. առաջացել էին մեծ քանակությամբ թարմ, մանր, սպիտակ գույնի պալարիֆիներ: Նույն բանը նկատվել է Սիսիանի բարձր լեռնային գոտու անշրջի ցանքերում: Թարմանը մալիսի կեսերին կորնգունը, վիճը, առվելացը բավական հարուստ են եղել թարմ, երիտասարդ պալարիֆիներով. օգոստոս ամսին այդ նույն ցանքերում մեծ դժվարությամբ կարելի է գտնել նորմալ պալարիֆիներ, չորության հետեւանքավ բոլորը ոչնչանում, դատարկվում ու չմշկվում են, մինչդեռ աշնանը, անձրևներն սկսվելուց հետո, նորից առաջանում են թարմ պալարիֆիներ:

Հետաքրքրական են մեր ստացած տվյալները՝ որոնք վերաբերում են նույնպես պալարագոյացման ինտենսիվությանը Մարտունու լեռնային գոտու փորձադաշտի շրտովի և անշրջի հողերում:

Առվելացի լուրաքանչյուր բուլսի վրա անշրջի պայմաններում հաշվվել է 3—4 փոքր պալարիֆ, մինչդեռ շրովի հողերում՝ 12—20 պալարիֆ, 16—48 մզ կշռով: Այդ նույն դաշտում կորնդանի անշրջի հողում մեկ բուլսի վրա հաշվվել է 6—7 պալարիֆ, 67,5 մզ կշռով, մինչդեռ շրովի հողում՝ 109 պալարիֆ, 791 մզ կշռով: Այս տարբերությունը շրովի և անշրջի հողերի վերաբերյալ ոչ թե հինգ անգամ է, ինչպես այդ նկատել է Cain-ը, այլ շատ ավելի, մանավանդ կորնգունի վերաբերյալ:

Անշուշտ, խոնավությունն վճռական նշանակություն ունի, թիթեռնածաղկավոր բուլսերի սիմքիովի նորմալ և էֆեկտավոր ըն-

թացքի համար: Ալդ տեսակետից միանգամայն կրագացի է Ֆեռնդրովը, երբ գրում է, «պալքարը չը է համար չորտին շըշաններում, պալքար է միաժամանակ և մթնոլորտի ազոտի լուրացման համար թիթենածաղկավոր բուլսերի միջոցով»:

Ինչպես պարզվեց վերը բերված զրական տվյալներից, թիթենածաղկավոր բուլսերի և պալարաբակտերիաների նորմալ սիմբիոզի համար ամենանպաստավոր խոնավությունը տատանվում է փորձարկվող հողի կամ ավազի լրիվ խոնավունակության $60-80\%$ -ի ստանաներում:

Ներկա աշխատության նպատակն է ճշտել արդ տվյալները բազմամյա թիթենածաղկավոր բուլսերի՝ ավուկտի, կորնգանի, երեքնուկի վերաբերյալ, քանի որ եղած ուսումնասիրությունները հիմնականում վերաբերում են միամյա թիթենածաղկավորներին: Բացի ալդ, ամենից կարևորն է ստուգի պալարաբակտերիաների տարրեր էկոտիպերի աղապտուցիան խոնավության տարրեր պար-ժաններում: Ինչպես ալդ աղացուցվել է մեր նախկին աշխատություններում (1953, 1955) նույն պալարաբակտերիաների ակտիվության էֆեկտիվության և դեպի ջերմաստիճանն ունեցած վերաբերունքի մասին:

Պալարաբակտերիաների տարրեր էկոտիպերի խոնավության կորագծերը որոշելու համար դրվել է մինհատյուր վկեցացինն ստերիլ փորձ 500 գ տարրողությամբ աղակայա բանկաների մեջ: Փորձարկման է ենթարկվել գորշ, կուտուր-սոսովմող հող՝ վերցված Միկրոբիոլոգիայի սեկտորի Երեանի փորձադաշտից: Փորձը դրվել է $10, 20, 40, 60, 80, 90$ և 100% խոնավության պարմաններում: Հաշված փորձարկվող հողի լրիվ խոնավունակությունից, որը հավասար է եղել $47,58$:

Վերոհիշյալ թիթենածաղկավոր բուլսերի սերմերը ստվածալով և աշղիբուզ ախտահաննելուց հետո վարակվել են փորձարկման ենթակա պալարաբակտերիաների երեք օրական թարմ կալուրաների հավասար սուսպենզիաներով, ապա միախա ցանվել ու խոնավացվել վերը նշված տոկոսներով: Ալրդիսի պատրաստի վիճակում որոշվել է լուրաքանչյուր փորձանոթի կշիռը և այն պահպանվել է ամբողջ փորձի ընթացքում՝ օրական մեկ, իսկ հարկ եղած դեղքում և երկու անգամ ջրելով: Վեգետացիալի ընթացքում լուրաքանչյուր անոթում պահպանվել է $3-6$ բուլս: Նկարագրված փորձի արդյունքներն ամփոփված են աղյուսակներ $1, 2$ և 3 -ում և լուսանկարներ $1-4$ -ում:

Աղյուսակ 1

Առաջայի 6 բույսի բերքը զ-ներով և պալարիկների թիվը
ըստ խոնավության տոկոսների

Խոնավության տոկոսների պահանջման առաջայի 6	Փորձարկված շտամները							
	Կոնտրոլ		32		4		43	
	բերք	պալարիկ	բերք	պալարիկ	բերք	պալարիկ	բերք	պալարիկ
10	0,15	0	0,05	0	0,2	1	0	0
20	0,3	0	0,35	3	0,35	4	0,04	1
40	0,6	0	0,5	2	0,6	1	0,65	0
60	1,1	2	1,2	3	1,1	3	0,9	0
80	1,2	0	1,1	2	1,6	3	1,45	3
90	0,5	1	0,59	0	0,55	1	0,41	4
100	—	0	—	0	—	0	—	0

Աղյուսակից երևոմ է, որ աղյուսակություններում տառամասների պալարագուացման ուժեղ չի եղել, թեպես նրանք ուրիշ փորձերում ստուգված ակտիվ ու վիրուկնա շտամներ են: Դաշտավայրի երկու շտամները՝ № 4-ը և № 32-ը, մեկուսացված գորշ կուտար-ոռոգվող հողերից ծովի մակարդակից 900 մ բարձրության վրա, ավել են համարյա նույնանման աղյուսներ թե՛ բերքի և թե՛ պալարիկների: Այս շտամների և կոնտրոլ վարիանտի մեկական կրկնողակիրաններում բուլուների աճեցողությունն ակտվում է $10^{\circ}/\text{o}$ խոնավության պարբաններից, թեպես շատ թուլ, այնուհետեւ խոնավության բարձրացման հետ մեկանդ ուժեղ կերպով ավելանում է բերքի քանակը և իր մաքսիմումին է հասնում $80^{\circ}/\text{o}$ խոնավության դեպքում, անխափիր բոլոր վարիանտների համար: $90^{\circ}/\text{o}$ խոնավության բոլոր վարիանտներում բերքի քանակը նվազում է, մոտ երեք անգամ՝ 60 և $80^{\circ}/\text{o}$ -ի համեմատությամբ:

Բարձր-լեռնալին դուռը (2250 մ ծ. մ.) անշրջի սևաճողից մեկուսացված և 43 շտամը նկատելի կերպով տարբերվում է վերը նկարագրված դաշտավայրից մեկուսացված շտամներից: Այս շտամը $10^{\circ}/\text{o}$ խոնավության դեպքում բոլորովին բերք չի տալիս, այսինքն բուլունը չին աճում, $20^{\circ}/\text{o}$ -ի դեպքում ևս բերքը շատ չնշին է և մոտ չորս անգամ ավելի պակաս, քան կոնտրոլ վարիանտի և մյուս շտամների բերքը: Այս շտամը, ինչպես տեսնում ենք, պալարիկները է առաջացրել միայն 80 և $90^{\circ}/\text{o}$ խոնավության պարբաններում, որը հավանաբար պետք է բացատրել այդ շտամի էկոլոգիական տառանձնահատկություններով:

Աղլուսակ 2-ում՝ բնըլամ ևն նոշնանման տվյալներ կորչն-
գանի վերաբերյալ:

Աղջուսակ 2

Կորնդանի Յ բույսի բնըլամ գ-ներով և պալարանքի Բի՛ի
ըստ Խոնավության տոկոսների

Համարուցիչ թվանի կորնդանի	Փորձարկված շտամները							
	Կոնստրուկ-		43)		47		61	
	բնըլ	պալա- րիկ	բնըլ	պալա- րիկ	բնըլ	պալա- րիկ	բնըլ	պալա- րիկ
10	0,55	0	0,9	0	1,4	1	1,3	1
20	0,74	0	1,4	1	1,4	0	1,4	1
40	1,8	0	2,0	1	1,7	2	1,9	3
50	2,0	0	2,1	3	2,1	3	1,8	3
80	1,9	0	2,1	4	2,5	6	1,6	2
100	0,9	0	0,9	0	0,97	4	0,86	4
	—	0	—	0	—	0	—	0

Աղլուսակ 2-ի տվյալներից երեսմ է, որ կորնդանը $10^0/0$ խոնավության գեղջում արգեն տվյալ է նկատելի բնըլ, մասավանդ փորձարկվող պալարաբականերից Ն 47 և Ն 61 շտամների գեղջում, մինչդեռ առվուտը, ինչպես տեսանք, այդ պարբաններում համարլա աճ չէր տվյալ, բացառությամբ երկու գեղջիկ, երբ շատ չնշին մասսա էր սուացվել: Այս աղլուսակում ուշադրավ՝ է և այն, որ $10^0/0$, $20^0/0$ և հետագա տվյալի բարձր խոնավության պար-մաններում սուացված բնըլի տվյալների միջև տարբերությունն ամբան էլ մեծ չէ, ամենաշատը կրինագագատիվն է, մինչդեռ առ-վուտի վերաբերյալ այդ տարբերությունները, ինչպես տեսանք 3—4 անգամից ավելի էին: Մյուս կարեոր մոմենտն այն է, որ կո-րնդանի համար, ըստ այս փորձի, բնըլի տվյալների խոնավության օպտիմումը որոշ տատանումներով կարելի է հաջին 40 60 և $80^0/0$ խոնավությունը, իսկ 90^0 օ-ի գեղջում բնըլը նվազում է 2 — $2,5$ անգամ, թեզիսև պալարագուցումը Ն 47 և Ն 61 շտամների գեղ-ջում $90^0/0$ խոնավության պարբաններում մլտան էրից պակաս չի եղիլ:

Այս աղլուսակը կորնդանի համար միանգամայն բնական ևն օրինաչափ, քանի որ նա իր մի շարք հատկանիւններով, որոնց թվում և չորադիմացկանությամբ նման չէ առվալտին, հետևաբար կորնդանի և առվուլտի խոնավության օպտիմումները պետք է տարբերվեին մշտ լանցից: Փորձարկված պալարաբականերից շտամ-

ների բերքի միջև եղած տարբերաթյունն այնքան էլ մեծ չէ, քայլառությամբ № 47 և № 49 դաշտավայրից մեկուսացված շտամմերի՝ 60 և 80% խոնավության դեպքում տված բերքից, որը նկատելիորեն բարձր է № 61 լինային շտամի հունի խոնավության զարգացմաններում տված բերքից:

Պալարաբակտրամբը ինչպես տուժայտի, այս գեղքում ևս ինտենսիվ չի եղիլ, մանավանդ լինային № 61 շտամի գեղքում: Պալարիկների թիվը համեմատաբար մեծ է 60, 80 և 90% խոնավության վարիանտներում:

Լորու պալարաբակտերիաների տարրեր էլեկտրաֆերին անհրաժեշտ խոնավության կորագութերի որոշման վերաբերյալ արգունքներըն ամփոփված են աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

Լորու 6 րույսի կանաչ մասսայի բերքը դ-ներով և պալարիկների
թիվը ըստ խոնավության տոկոսների, րույսերի լրիվ
կոկանակալման և ծաղկման ակդրում:

Կոկանակալման թիվը պունիությամբ	Փորձարկված շտամմերը							
	Կոկանակալման թիվը պունիությամբ		88		92		107	
	բերք	պալարիկ	բերք	պալարիկ	բերք	պալարիկ	բերք	պալարիկ
10	4,4	0	0	0	4,5	0	6,8	0
20	16,4	0	18,2	18	11,1	0	15,1	0
40	20,3	0	22,8	145	22,8	0	20,7	1
60	32,5	2	31,2	104	30,2	0	33,2	5
80	40,3	0	41,1	187	40,1	1	35,2	0
90	—	2	—	94	—	3	23,4	3
100	—	0	—	55	—	0	—	0

Յ-թի աղյուսակի տվյալներից երևամ է, որ լորու զարգացման համար օգտիմալ խոնավությունը 60–80% սահմանումն է, նույնին է և պալարաբակտրամբ համար, թեպիես № 88 շտամը, որը մեկուսացված է Սև ծովի ափից, Գագրու հոգերից, մեծ քանակությամբ պալարիկներ է տվել նույն 40% խոնավության գեղքում: Պետք է նշել, որ փորձարկվող շտամներից ներկա փորձի պայմաններում միայն № 88 շտամն է, որ առառ պալարիկներ է տառաջցրել: Նույնինը 90 և 100% խոնավության վարիանտներում: Ուղարկան, ինչպես ցույց են տալիս աղյուսակ Յ-ի տվյալները, այլ նույն շտամը 10% խոնավության գեղքում ոչ բերք է տվել և ոչ էլ ուղարկիկներ: Սա բացարկվում է այլ շտամի էկոլոգիական առանձ-

նահատկությամբ, քանի որ, ինչպես արդեն ասվեց, № 88 շտամը մեկուսացվել է Սև ծովի ափից:

Ստերիլ հողի միջավայրում, ըստ երեսութիւն, ոչ ըոլոր պալարաբակտերիաներն են նորմալ ձևով պալարիկներ առաջացնում, որովհետեւ, ինչպես անսանգ վերը բերված օրինակներից, վեղիտացիալի ընթացքում առաջացած պալարիկների թիվը, բացի լորով № 88 շտամից շատ սահմանափակ է եղել: Այդ իսկ պատճառով լորով վերաբերալ մինխատուր վեգետացիոն փորձը կրկնել ենք նաև լվացած ստերիլ ավազի միջավայրում: Փորձը գնելու տեխնիկան եղել է նույնը, ինչ որ նկարագրվեց հողի միջավայրում դրված փորձի համար, այն տարրերությամբ միայն, որ վերջին դիպքում ավտով հսկեցվել է Պրլանիշնիկովի մննդատու լուծութով:

Ա գ յ ո ւ ս ա կ 4

Լորով բերքի և պալարիկների քանակությունը ստերիլ ավազի միջավայրում: Կանաչ մասսայի բերքը հաշված է 6 բույսի վրա դրամներով բույսերի կոկոնակալման և ծաղկման շրջանում

Կոկոնակալման թիվը կոկոնները	Փորձարկված շտամները					
	Կոկոնակալման թիվը		92		107	
	բերք	պալարիկները	բերք	պալարիկները	բերք	պալարիկները
10	0	0	0	0	0	0
20	0	0	0	0	0	0
40	20,6	0	22	21	17,4	11
60	33,4	9	28,6	43	33,8	30
80	38,3	8	32,6	52	33,4	41
100	35,8	4	41,3	266	39	85

Աղյուսակ 4-ի տվյալները ցույց են տալիս, որ ավազի միջավայրում 10 և 20⁰/0 խոնավության գեպքում լորին ոչ մի բերք չի ավել: 20⁰/0-ի գեպքում սկզբնական շրջանում եղել են մի քանի թույլ ծիլեր, որոնք հսկապայում չորացել են: Այս ավյաները համապատասխանում են Ֆեոդորովի և Պոլյակովովկալյալի (1951) և շատ ուրիշների կողմից ավազային կուլտուրաներում գրված փորձերին: Բերքի քանակը համապատասխան խոնավության պարմաներում հողի և ավազի միջավայրում համարյա թի նույնն է եղել, մինչդեռ պալարագույացումը ավազի պայմաններում, ինչպես պետք էր սպասել, եղել է ավելի ինտենսիվ, մանավանդ 100⁰/0 խոնավության վարիանտում:

Փորձարկվող թիթենածաղկավոր բուլսերից վիկի և երեք-նումի պալարարակտերի հաները վերը նկարագրված փորձի պայման-ներում, բացի $100^0/0$ խոնավության վարդիանատից, մնացած դիպքե-րում պալարիկներ չեն առաջացրել, թեպետք վիկի բուլսերի աճե-ցաղությունը եղել է նորմալ և հասել է ծաղկման, ինչպես այդ կտևանենք ներքեւում բերված համապատասխան լուսանկարում։ Գետք է նշել, որ վիկի և երեքնումի փորձարկվող պալարարակտե-րիաների բոլոր շտամիներն ել $100^0/0$ խոնավության դեպքում առա-շացրել են պալարիկներ։ Այսպիսո, վիկի

շտամ № 110-ը՝ 6 մեծ պալարիկ երեք բուլսի վրա
շտամ № 111-ը՝ 10 » » » »
շտամ № 114-ը՝ 20 » » » »

Բոլոր պալարիկները դասավորված են եղել հոգի վերին շեր-տում բուլսերի արմատավղիկներում, դա համեմալի է, քանի որ $100^0/0$ խոնավության պարմաներում օդի մուտքը ավելի ստո-րին շերտերը հնարավոր չեն եղել, այդ իտլ պատճառով պալարիկ-ները առաջացրել են արմատների վերին մասում։ Երեքնումի փոր-ձարկվող չորս շտամիներն ել ամեն մի բուլսի վրա առաջացրել են 2—5 պալարիկի, իսկ բուլսերի աճեցողությունը եղել է թափ:

Ինչպես արդեն մատնանշվեց վերեւամ, թիթենածաղկավոր բուլսերի պալարաբակտերիաների առընթեր էկուսիալիքին անհրաժեշտ խոնավության կորագծերը որոշելիս, մինիատյուր վեգետացիոն փորձերի ավյաներն ավելի ակնառու լինելու համար, բերում ենք նաև տարբեր խոնավության պարմաներում աճեցրած բուլսերի լուսանկարները (տե՛ս. լ. ն. 1, 2, 3 և 4):

Լուսանկար 1-ից երեսում է, որ առվուլաը 10 և $100^0/0$ խո-նավության պարմաներում չի աճել։ Աճեցողաթյունը թույլ է նաև 20 և $40^0/0$ -ի վարդիանաներում, ավելի ինտենսիվ աճեցողություն եղել է 60 և $80^0/0$ խոնավության վարդիանաներում։ Այդ հաստատ-վում է ազլուսակ 1-ում բերված բերքի թվական ավյաներով։


Լուսանկարներ 2 և 3-ը ցույց են տալիս, որ լորին ու վիկիը խոնավության նկատմամբ իրենց վերաբերմունքով նման են և հիմ-նականում խոնավասեր են։ Նրանք օպտիմալ աճեցողություն են ունեցել 60, 70 և $90^0/0$ խոնավության պարմաներում։ Լորին $100^0/0$ խոնավության վարդիանառում, մեծ մասամբ, չի աճել, իսկ վիկը տվել է նկատելի աճ։ Այսպիսով, պարզվում է, որ վիկը և լորին թեպետ խոնավասեր բուլսեր են, բայց նկատելի աճեցողություն ունենալու են նաև մինիմալ խոնավության պարմաներում։



Նկ. 1. Առվարձակի աճեցողության ինտենսիվությունը $10 - 100\%$
խոհավության պայմաններում:



Նկ. 2. Լորու աճեցողության ինտենսիվությունը $10 - 100\%$
խոհավության պայմաններում:




Նկ. 3. Վեկի աճեցողության ինտենսիվությունը $10-100\%$
խոնավության պայմաններում:

Ինչպես տեսնում ենք, թիթեռնածաղկավորներից միայն վիճըն է; որ բարոր վարկանաներում աճել է 100% խոնավության պայմաններում: Սակայն, պետք է նշել, որ մյուս թիթեռնածաղկավորներն ես որոշ գեղջերամ տվել են աճ նաև 100% խոնավության գեղջում: Ալազես, լրու 8 վագոններից միայն № 88 շտամով վարակված երկու անոթներում եղել է աճեցողություն, այն էլ միանգամայն նորմայ և փարթամ: Կորնդանը 8 անոթից երկուսում է անհցել թույլ աճեցողություն: Առվույն ու երեք նույն պայմաններում Յ—Ք անոթում: Այս ավլայները ցուց են արխած լուսանկար 4-ում:

Պալարաբականիքիտների տարրեր էլուստիպերին անհրաժեշտ խոնավության կորագծերը որոշելու համար մեխանիկական տարրերի մաքուր կուլտուրաների միջանքի էլեկտրոդերի զարգացման ինտենսիվությունը ստերիլ հողում, տարրեր խոնավության պայմաններում:

Այդ նպատակի համար օգտագործվել է նույն գորշ կուլտուր սոսոզով հողը, որի գրա գրվել է հետեւալ փորձը: 100-ական գրամ հող, մաղված երկու մ՛շ տրամադրիծ ունեցող մաղով, լցվել է 250 մմ³ տարրողությամբ ապակյա գլանանման կոլբաների մեջ, խցանվել բամբակյա խցանով, խոնավացվել հողի լրիվ խոնավունակու-



Նկ. 4. Լորու, վիկի, առվույտի, կորուզանի և երեքնուկի աճեցողականթյունը $1000^{\circ}/\circ$ խոնավության պայմաններում:

թվան $10, 20, 30, 40, 60, 70$ և $80^{\circ}/\circ$ -ի չափով և ստեղծվելուայլի հնիթարվելել ավտովլավում երկու մթնոլորտի առաջ երկու ժամ, որից հետո կոլբաները վարակվել են առվույտի պալարակակտերիաների տարբեր էկոտիպերի $2-3$ օրվա ժարմ կուշտորաների հայաստր քանակի սուսպենզիալով, որը ստեղբի պիխառով հայտարարեացանովել է կոլբաների մեջ եղած հողի երևսին, ապա որոշ ժամանակից հետո հողը լավ թափանարվել է և նույն օրը որոշվել պալարաբակտերիաների նախնական տիտրը հետազոտվող բույր շտամների $60^{\circ}/\circ$ խոնավության վարկանտում: Դրանից հետո կոլբաները գրվել են տերմոստատի մեջ $25-26^{\circ}$ զերմության պայմաններում և հինգ օրը մեկ անդամ խոնավացվել ստեղբի ջրով, ամերող փորձի ընթացքում կոլբաների մեջ պահպանելով միենալիք խոնավությունը: Այնուհետև, պալարաբակտերիաների ախտը որոշվել է փորձը զնելոց 10 օր, 1 ամիս և 2 ամիս անց: Տիտրը որոշվել է լորի ագարի միջավայրում $1, 10, .20$ և 50 միլիլին նուսրացումների պահմաններում: Ստացված արդյունքներն ամփոփվուծ են աղյուսակներ 5, 6 և 7-ում: Վերշիններս չծանրաբեռնելու նպատակով թերվում են միայն 10 միլիլին նոսրացման տվյալները, վերածած 1 գ չոր հողում եղած պալարաբակտերիաների թիվը միլիլիններով:

Աղջուռակած

Առաջուրակած պալարաբակտերիաների քանակությունը 1 գ շոք հոգած
միջուններով, փորձը գնելուց 10 օր հետո

Հասակաված շամաների № և	Մեջուրակած աման ըստ քայլության փեղի	Գույքը՝ ըստ քայլության փեղի	Խոնավության առկաուները						
			10	20	30	40	60	70	80
32	500	357	0	0	12	80	80	245	100
35	1000	233	0	0	73	40	35	456	137
26	1935	—	0	0	24	133	285	260	80
44	2250	354	0	36	56	173	174	120	80
42	2300	193	0	36	56	373	950	630	940

Աղյուսակ 5-ի տվյալներից պարզվում է, որ ստերիլ հողը առվագակած պալարաբակտերիաներով վարակվելուց 10 օր հետո կատարված ցանքում 10 և 20%/₀ խոնավության միջավայրում համարյա թե աճ չի եղել, բացառությամբ երկու լեռնալին շտամների, որոնք 20%/₀-ի գնդակում տվել են շատ փոքր տիտր: Փորձարկվող պարաբակտերիաների զարգացման համար նպաստավոր է եղել 40—80%/₀ խոնավությունը, ամենից լավը՝ 70%/₀-ը:

Սակայն, պետք է նկատել, որ նշված բարենպաստ խոնավության պալմաներում ևս պալմաբակտերիաների ախտը որոշ շտամների մոտ ավելի պակաս է, քան նրանց նախնական քանակությունը 1 գ, չոր հողում փորձը գնելու օրը: Սա գուցն բացարկվում է նրանում, որ փորձարկվող պալմաբակտերիաների տարբեր էկուտիպերը գեռ լրիվ չեն ընտելացել սույն փորձի պալմաններին, կամ թե չէ լրանվել են հողի մեջ և սոլորական մեթոդով 10 բողնի թափահարելու միջոցով չեն անջատվել հողի մասնիկներից:

Ըստ առանձին էկուտիպերի որոշ օրինաչափություն չի նկատվում: Բացառությամբ այն բանի, որ գաշտավայրից մեկուսացված № 32 և № 35 շտամները 40 և 60%/₀ խոնավության պալմաններում շատ ավելի թույլ են զարգացել, քան փորձարկվող № 26, № 44 և № 42 լեռնալին շտամները: Փորձարկվող էկուտիպերից № 42 բարձր լեռնալին շտամը լրում բոլոր շտամների համեմատությամբ ամենից բարձր տիտրն է տվել 40—80%/₀ խոնավության պալմաններում:

Ինչպես արդեն վերևում ասվել է, պալմաբակտերիաների տիտրը որոշվել է նաև փորձը գնելուց 1 և 2 ամիս հետո: Աղյուսակներ 6 և 7-ում բերվում են այդ տվյալները:

Աղյուսակ 6

Առջույթի պալարաբակտերի քանակությունը 1 գ չոր հողում
միլիոններով, փորձը դնելուց մեկ ամիս հետո

Հետազոտված շտամների № Ա.	Միլիոններով մասնակտությունը գիր գակից	Պալարաբակտերի քանակությունը միլիոններով	Խոնավության տոկոսները							
			10	20	30	40	60	70	80	
32	500	357	202	215	163	240	414	2473	490	
35	1000	233	0	34	256	265	10	196	1410	
26	1935	—	42,5	97	365	320	665	43,6	764	
44	220	354	0	409	365	500	41	754	608	
42	2300	193	95,7	500	439	—	18,8	3684	1353	

Աղյուսակ 7

Առջույթի պալարաբակտերի քանակությունը 1 գ չոր հողում
միլիոններով, փորձը դնելուց երկու ամիս հետո

Հետազոտված շտամների № Ա.	Միլիոններով մասնակտությունը գիր գակից	Պալարաբակտերի քանակությունը միլիոններով	Խոնավության տոկոսները							
			10	20	30	40	60	70	80	
32	500	357	106,3	318	341	400	ձուլ.	1222	1333	
35	1000	233	21,2	454	28	553	336	1140	Ճուլ.	
26	1935	—	41,4	51	46	731	1031	824	1313	
44	220	354	10,6	215	207	320	349	561	1628	
42	2300	193	53,7	204	Ճուլ. 660	349	1666	1666	1274	

Խոչքես տեսնում հնք աղյուսակներ 6 և 7-ի տվյալներից փորձարկվող պալարաբակտերի առևելի հողի միջավայրում 1 և 2 ամսակա ընթացքում ջատ լավ զարգանում են և հետզհետե ավելացնում իրենց տիտրը Մանավանի երկու ամիս անց կատարված անալիզները ցուց են տալիս, որ 60, 70 և 80% խոնավության պայմաններում պալարաբակտերի ախարը մեծ մասմբ միլիարդների է հասնում մեկ դրամ չոր հողում: Ի տարրեկրություն աղյուսակ ճ-ի, աղյուսակ 7-ում բոլոր հետազոտվող շտամները 10 և 20% խոնավության պայմաններում ես զարգացել են և ունեցել մի քանի միլիոնի համաստղ տիտր: Սա հավանաբար բացատրվում է նրանով, որ փորձարկվող պալարաբակտերի աստիճանաթիւ համակերպվել են 10 և 20% խոնավության պայմաններին և սկսել են բազմանալ, ինչ որ չնկատվեց փորձը զննելոց 10 օր հետո կատարված անալիզներում (աղյուսակ 5): Նույն կերպ պետք է բացատրել նաև աղյուսակ 7-ում բերված 80% խոնավության տվյալ-

ները, որոնք, նախորդ աղյուսակների նույն տվյալների հետ համապատասխած, ավելի բարձր են:

Պ. Բ. Քալանթարյանի (1914 թ.) տվյալներով նույնապես, պարարակտերիաների քանակության ստերիլ հողում $30-50\%$ բարձրակ խոնավության պարբաններում աստիճանաբար ավելանում է, սակայն միաժամանակ հեղինակը նշում է, որ 3 ամսուց հետո $30-38\%$ խոնավության փարիսանտերում պալարաբակտերիաների քանակը շարունակել է ավելանալ, իսկ բարձր խոնավության պարմաններում թևակետն նրանց քանակությունը քիչ չէ, բայց աստիճանաբար պակասում է: Մեր տվյալներում այս վերջին մոմենտը չի նկատվում, դուքս այն պատճառով, որ փորձը եղել է ամելի կարճատես: Աղյուսակներ 6 և 7-ի տվյալներում տշագրավն այն է, որ փորձարկվող պալարաբակտերիաների տարրեր էկոտիպերի զարդացման ինտենսիվությունը, խոնավության տարրեր պարբաններում համարյա թե կորիւլացիայի չի ենթարկվում նրանց ծագման էկոլոգիական առանձնահատկության հետ, ինչ որ տեսանք վեպեացիոն փորձերի տվյալներից (աղ. 1):

Վերը նկարագրված փորձերի ժամանակ ուսումնասիրվել են նաև խոնավության տարրեր պարբաններում փորձարկվող պալարաբակտերիաների մորֆոլոգիական փոփոխությունները:

Պարզվել է, որ փոքր և նորմալ խոնավության պարբաններում պալարաբակտերիաների դադութները եղել են, մեծ մասամբ, կոմպակտ, ուռուցիկ, կաթնավուն, քիչ չեն եղել և ոսպնյակածն դադութներ, մինչդեռ $70-80\%$ խոնավության դեպքում դադութները միանդամայն փոխվում են, դառնում մանր, թափանցիկ, ուժեղ հատիկավորվում են:

Դադութների այսպիսի փոփոխություններն ընդհանուր են եղել բոլոր չոտաների համար: Պատք է նշել, որ արդպիսի դադութներից կտարբնել է բակտերիաների մեկուսացում և դիտվել, որ հնատառ մի քանի վերացանքերի ժամանակ ևս թիք աղարչի վրա նրանք պահել են իրենց արտաքին նոր ձևը:

Տարբեր թիթեռնածաղկավոր բույսերի և նրանց պալարաբակտերիաների էկոտիպերի զարդացման խոնավության մինիմումը 20% -ի սահմանումն է, թեպետև փորձի տակ եղած 8 մինչեացիոն անոթներից երեքում շատ թույլ աճե-

1. Առվագակի և նրա պալարաբակտերիաների զարդացման խոնավության մինիմումը 20% -ի սահմանումն է, թեպետև փորձի տակ եղած 8 մինչեացիոն անոթներից երեքում շատ թույլ աճե-

ցողաթլուն է եղել նաև $10^0/0$ խոնավության վարիանտում: Օպտիմամբը $60—80^0/0$ -ի է հասնում, չնայած 80 -ի գեղքում բերքը համեմատաբար ավելի բարձր է եղել: $90^0/0$ -ի գեղքում բերքը նկատելի կերպով նվազում է: $100^0/0$ խոնավության պարբաններում Յ անոթներում միայն եղել է թուլլ աճեցողություն, նրանց տրմատները սեւացած և փառած են եղել: Այսպիսով, առվուրի և նրա պալարաբակտերիաների զարգացման խոնավության կորագիծը առանգում է $20—90^0/0$ -ի սահմաններում, ըստ որում օպտիմամբը հավասար է $60—80^0/0$ -ի:

2. Կորնգանի և նրա պալարաբակտերիաների զարգացման խոնավության կորագիծն ակավում է $20^0/0$ -ից օպտիմամբի է հասնում 40 , 60 և $80^0/0$ -ի գեղքում, $90^0/0$ -ի պարբաններում ուժեղ նվազում է բերքի քանակը, թեպետ պալարաբույացումը շարունակվում է: $100^0/0$ -ի պարբաններում 8 անոթներից երկուսում եղել են թուլլ աճած բուլսեր՝ փառած արմատներով: Այսպիսով, կորնգանի և նրա պալարաբակտերիաների խոնավության կորագիծը ընկած է $10—90^0/0$ -ի սահմաններում, ըստ որում օպտիմամբը հավասար է $40—80^0/0$ -ի:

3. Լորու բուլսի և նրա պալարաբակտերիաների զարգացման համար անհրաժեշտ խոնավության մինիմանները չեն համընկնում իրար, բուլսերը սկսում են զարգանալ $10^0/0$ խոնավության գեղքում, մինչեւ պալարաբույացումն ակավում է $20^0/0$ -ից միսած: Բայց սերի և պալարիկների զարգացման համար անհրաժեշտ օպտիմամբը խոնավությունը ստատանվում է $50—80^0/0$ խոնավության սահմաններում, թեպետ վատ չէ նաև $40^0/0$ -ը: $90^0/0$ -ի պարբաններում ևս պալարաբույացումը վատ չի ընթացել: Լորու պալարաբակտերիաների ուսումնակիրզող շտամներից լե 88-ը իր պալարաբույացման ինտենսիվությամբ աշքի է ընկել խոնավության $90—100$ -ի պարմաններում:

Լորու բուլսը և նրա պալարաբակտերիաները ստերիլ ալվազի միջավայրում սկսում են զարգանալ միայն $40^0/0$ խոնավության պարբաններում: Պալարաբույացման ինտենսիվությունը և բուլսի բերքը իրենց մաքսիմումին են հասնում $100^0/0$ խոնավության պարմաններում: Լորու պալարաբակտերիաների պալարաբույացման ինտենսիվությունն ստերիլ ավազի միջավայրում անհամենատ ավելի մեծ է քան ստերիլ հողում:

Վիկը ստերիլ հողի միջավայրում աճել է $10—100^0/0$ խոնավության պարբաններում: $100^0/0$ խոնավության պարբաններում ոչ

միայն լավ աճել է զիկը, այլև բոլոր փորձարկվող շատամներն էլ առաջացրել են պալարաբիկներ: Նույնը կարելի է ասել և երեքնուկի հետազոտվող շտամների վերաբերյալ, որ բոլորն էլ ի տարրերություն առվարդակ և կորնդանի $100^{\circ}/_0$ խոնավության դեպքում առաջացրել են պալարաբիկներ:

Առվարդակի պալարաբականերիաների մաքուր կուլտուրաների զարգացման ինտենսիվությունը ստերիլ հողամ ուսումնասիրելիս պարզվել է, որ պալարաբակտերիաների զարգացման օպտիմալմբ տատանվում է $60—70$ և $80^{\circ}/_0$ խոնավության պարմաններում, ըստ որում ամենաբարձր թվեր ստացվել են $70^{\circ}/_0$ -ի գեպքում, իսկ 60 և $80^{\circ}/_0$ խոնավության դեպքում համարյա միանման թվեր են ստացվել:

Առվարդակի պալարաբակտերիաները նշված միջավայրում շատ ամեն զարգացել են փորձը գնելուց $1—2$ ամսվա ընթացքում, նրանց քանակությունը 1 գ չոր հողամ հասել է միլիարդների, մանավանդ 1 ամիս հետո կատարված անալիզներում:

Մեր հետազոտություններից պարզվում է, որ ուսումնասիրվող թիթենոնածագլվոր բույսերի պալարաբակտերիաների տարրեր էկուտիպերը, բացառությամբ առվարդակի պալարաբակտերիաների որոշ շտամների (աղ. 1), վեպի խոնավության գործոնը չեն ցուցաբերել այնպիսի ակնրախ հարմարվելու ունակություն, ինչպիսին շատ պարզ և համոզիչ կերպով նկատվել է նրանց արտաքին փոփոխված պարմաններում ցուցաբերված էֆեկտիվության և դեպի շերմության տարրեր աստիճաններն անհետած վերաբերմունքի արդյաներում:

Դա ամենայն հավանականությամբ բացատրվում է նրանով, որ հետազոտվող պալարաբակտերիաների էկուտիպերը, մանավանդ լիռնալին գոտուց մեկուսացված շտամները, իրենց զարգացման ընական պարմաններում միշտ ենթակա են խոնավության խիստ փոփոխական պայմանների: Խոնավության ուժեղ տատանումների են ենթարկվում նաև դաշտավայրի շրովի հողերից մեկուսացված շտամները, մեկ շրից մինչև մյուսն ընկած ժամանակամիջոցում:

Հետևաբար, նրանք հենց բնաթյան մեջ ձևոք են բերել խոնավության տարրեր պարմաններում զարգանալու ունակություն, ինչ որ հաստատվում է մեր հետազոտությունների տվյալներով:

Ա. Պ. Պետրոսյան, Ա. Գ. Նավասարդյան

Предельная влажность развития экотипов клубеньковых бактерий

Р е з ю м е

На основании исследований, проведенных с целью определения кривых влажности развития различных бобовых растений и экотипов их клубеньковых бактерий, можно прийти к следующим выводам:

1. Минимальная влажность для развития люцерны и ее клубеньковых бактерий лежит в пределах 20%, от полной влагоемкости испытуемой почвы, хотя и в 3 из 8 опытных вегетационных вазонов наблюдался слабый рост также и в вариантах с 10% влажности. Оптимальная влажность достигает 60—80%, несмотря на то, что при 80% урожай получился сравнительно более высокий. При 90% урожай заметно снижается. В условиях 100% только в 3 вазонах наблюдался слабый рост, а корни побурели и сгнили. Таким образом, кривая влажности развития люцерны и ее клубнеобразования лежит в пределах 20—90%, причем оптимум приближается к 60—80%.

2. Кривая влажности развития эспарцета и образования у него клубеньков начинается с 10%, достигает оптимума в случае 40—60 и 80%, при 90% урожай резко снижается, но образование клубеньков продолжается. В условиях 100% влажности из 8 вазонов в 2 были хилые растения со сгнившими корнями.

Таким образом, кривая влажности развития эспарцета и клубенькообразования лежит в пределах 10—90%, причем оптимум равен 40—80%.

3. Минимальная влажность развития фасоли и образования у нее клубеньков не совпадает. Растения начинают развиваться в вариантах с 10% влажности, между тем как образование клубеньков начинается при 20%. Оптимальная влажность развития растений и клубеньков лежит в пределах 60—80%, несмотря на то, что оно неплохое и при 40%. В условиях 90% образование клубеньков также неплохое.

Из исследованных клубеньковых бактерий фасоли штамм 88 отличался по интенсивности образования клубеньков в условиях 90—100% влажности.

Растения фасоли и ее клубеньковые бактерии на среде со стерильным песком начинают развиваться при 40% влажности. Интенсивность образования клубеньков и урожай достигают максимума в варианте со 100% влажностью. Интенсивность образования клубеньков на стерильном песке несравненно выше, чем в стерильной почве. Это, возможно, объясняется адсорбцией клубеньковых бактерий частицами почвы и условиями аэрации.

Вика на стерильной почве дала рост при всех испытуемых условиях влажности с 10% до 100%. В условиях 100% влажности вика не только дала хороший рост, но и все испытуемые штаммы вызвали образование клубеньков. То же самое можно сказать и относительно исследуемых штаммов клевера, которые, в отличие от люцерны и эспарцета, все образовали клубеньки в условиях 100% влажности.

При изучении титра клубеньковых бактерий люцерны в стерильной почве, в лабораторных условиях опыта, при 10—100% влажности выяснилось, что оптимум развития клубеньковых бактерий лежит в пределах 60—70 и 80%, влажности, причем наивысшие цифры получены при 70%, а при 60 и 80% влажности получены почти одинаковые цифровые данные.

Клубеньковые бактерии люцерны в стерильной почве развивались очень интенсивно в течение 1—2 месяцев со дня заложения опыта. Их число в 1 г сухой почвы достигало миллиардов, особенно в анализах, произведенных через месяц.

Из всех исследований, проведенных по данному разделу, выяснился еще один важный вопрос, а именно, что различные экотипы клубеньковых бактерий изучаемых бобовых, растений, за исключением штаммов клубеньковых бактерий фасоли 88, люцерны 43 и эспарцета 61, не проявили такой явной адаптационной способности к фактору влажности, каковые мы очень ясно и убедительно увидели по данным их эффективности в измененных внешних условиях и к различным температурам.

Это по всей вероятности объясняется тем, что экотипы исследуемых клубеньковых бактерий в естественных условиях своего обитания всегда подвержены резко переменным условиям влажности, особенно штаммы, выделенные из горной неполивной зоны, а также и низменные штаммы поливной зоны, переносящие от одного полива до другого сильные колебания влажности, следовательно они уже в естественных условиях приобрели способность к развитию в условиях различной влажности, что подтверждается данными наших исследований.

ЧИСЛЕННОСТЬ

- Израильский В. П. 1951. Хранение клубеньковых бактерий в высушеннем состоянии. Труды Всес. ин-та микробиологии, т. 12, стр. 171.
- Калантаров П. Б. 1914. Развитие клубенькового микробы (*Bac. Radicicola*) в почве. Вестник Бактериолого-агрономической станции № 21, стр. 22.
- Ковровцева С. А. 1933. Влияние типа почвы и влажности на рост и размножение клубеньковых бактерий. Труды Всес. ин-та с.-х. микробиологии, т. V, стр. 98.
- Новогудский Д. М. 1946. Микробиологические процессы в почвах полупустыни. II нижние пределы почвенной влаги для жизнедеятельности бактерий. Микробиология, т. 15, вып. 3, стр. 117 и вып. 6, стр. 479.
- Омелянский В. Л. 1926. Устойчивость культур *Azotobacter Chroococcum* к высушиванию. Труды отдела с/х микробиологии Гос. ин-та агрономии, т. 1, стр. 65.
- И. Ф. Феофановъ. 1953. *Գալարքակտերիաների էկոպիպերի աղղեցությունը թիթեռնածաղկավոր բույսերի բերթափության վրա: Գյուղատնտեսական և արդյունաբերական Միկրօբոլոգիայի հարցեր, պրակ 1 (7), էջ 3:*
- Петросян А. П. и Арутюян Р. Ш. 1955. Температура развития экотипов клубеньковых бактерий. Вопросы с/х и промышленной микробиологии, вып. II (VIII), стр. 83.
- Вудаков К. И. 1930. Нитрагин и практика его применения.
- Стейфенсон М. 1951. Метаболизм бактерий. Изд. иностранной литературы. Москва.
- Тимурджи Г. К. 1940. Влияние t° и влажности почвы на жизнедеятельность клубеньковых бактерий при инокуляции нута. Сб. научно-исследов. работ Азово-черноморск. с.-х. ин-та, т. XI, стр. 75.

- Украинский В. Т. 1954. Клубеньковые бактерии на корнях бобовых растений. Микробиология, т. 23, выш. 3, стр. 291.
- Федоров М. В. 1952. Биологическая фиксация азота атмосферы. Сельхозгиз. Москва.
- Федоров М. В. и Подъяпольская В. П. 1951. Влияние условий выращивания бобовых растений на образование клубеньков и урожай растений. Доклады АН СССР, т. 77, № 1, стр. 121.
- Швецова О. Исследования над клубеньковыми бактериями. Опыты по заражению клубеньковыми бактериями сои в Среднем Поволжье. Труды Ин-та с.-х. микробиологии. Всес. акад. с.-х. наук им. Ленина (ВАСХНИЛ), т. IV, вып. 3, стр. 122.
- Pruela M. I. 1915. Physiological studies of *Bac. radicicola* of Canada field pea. N. Y. (Cornell) Agr. Col., № 5, p. 1
- Wilson K. K. 1917. Physiological studies of the *Bacillus radicicola* of the soy bean (*soja Max piper*) and the factors influencing nodule-production. N. Y. (Cornell) Agr. Exp. Sta. Bul., vol. 386, p. 369.